

Դաշնային գործազրկության նպաստներն ավարտվում են

Դիմեք կենսական սննդի, բնակարանային ապահովման, կոմունալ ծառայությունների և առողջապահական օգնության համար

2021թ. սեպտեմբերի 4-ից հետո դաշնային գործազրկության նպաստները կավարտվեն: Եթե Դուք ստանում եք այդ նպաստները, Դուք ծանուցում կստանաք Ձեր հայցի վրա ազդեցության վերաբերյալ: Մենք գիտենք, որ այս համավարակը դաժան ազդեցություն է ունեցել շատ աշխատողների և նրանց ընտանիքների վրա, և Դուք, անշուշտ, միայնակ չեք: Ահա թե ինչու մենք ուզում ենք համոզվել, որ Դուք տեղյակ եք, որ կարող եք որակավորվել մի քանի կենսական ծրագրերի համար, որոնք կօգնեն վճարել Ձեր սննդի, բնակարանի, կոմունալ և առողջապահական ծախսերը:

Եթե Ձեր դաշնային գործազրկության նպաստներն ավարտվում են, Ձեզ խրախուսվում է դիմել այս կենսական ծրագրերին, որոնք ընդլայնվել են American Rescue Plan-ով.

- Մեկ անձին ամսական մինչև \$234 սննդի աջակցության համար՝ [CalFresh](#)-ի միջոցով ([GetCalFresh.org](#)), անկար Ձեր գբաղվածության կարգավիճակից:
- Վարձակալության և կոմունալ ծառայությունների աջակցություն՝ [Housing is Key](#)-ի միջոցով ([HousingIsKey.com](#)): Վճարվում է վարձի և կոմունալ ծառայությունների 100 տոկոսը: Չանգահարեք Rent Relief (Վարձավճարի հարցով օգնություն) հեռախոսազանգերի կենտրոն՝ 1-833-430-2122
- Կայիֆորնիացիները կարող են ուղղակիորեն դիմել վարչաշրջանի հանրային ծառայությունների գործակալություն, որպեսզի ստանան կանխիկ դրամական աջակցություն և ծառայություններ երեխաներով ընտանիքների (CalWORKs) համար, սննդի աջակցություն (CalFresh) և առողջության անվճար ապահովագրություն (Medi-Cal) [BenefitsCal.org](#)-ի միջոցով:
- Առողջության ապահովագրություն ամսական ընդամենը \$1-ով, գործազրկության նպաստներ ստացող աշխատողներին՝ [Covered California](#)-ի միջոցով ([CoveredCA.com](#)):

Ո՞ր դաշնային գործազրկության նպաստներն են ավարտվում 2021թ. սեպտեմբերի 4-ին:

- Համավարակի ժամանակ գործազրկության աջակցություն (PUA) (Փոքր բիզնեսի սեփականատերերի, ինքնազբաղվածների, անկախ կապալառուների և այլոց համար, ովքեր չեն համապատասխանում սովորական UI-ին և բավարարում համավարակի իրավասության պահանջները):
- Համավարակի ժամանակ արտակարգ իրավիճակի գործազրկության փոխհատուցում (PEUC), որը գործազրկության նպաստների լրացուցիչ շաբաթներ է տրամադրում սովորական նահանգային UI-ի հիմնական 26 շաբաթներին ի հավելում:
- Համավարակի ժամանակ լրացուցիչ փոխհատուցում (PAC), հայտնի է նաև որպես Դաշնային համավարակի գործազրկության փոխհատուցում (FPUC), որը շաբաթական լրացուցիչ \$300 նպաստ է տրամադրում այն աշխատողներին, ովքեր ստանում են PUA, PEUC, FED-ED և սովորական նահանգային UI:
- Խառը վաստակողի գործազրկության փոխհատուցման (MEUC) հավելում, որը շաբաթական լրացուցիչ \$100 նպաստ է տրամադրում նահանգային UI-ի սովորական ստացողներին, ովքեր վաստակել են առնվազն \$5,000 ինքնազբաղվածության եկամուտ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Սովորական UI նպաստների առանձին երկարացումը, որը հայտնի է որպես FED-ED, 2021թ. սեպտեմբերի 11-ից հետո այլևս չի վճարվի:

Շահութաբեր աշխատանք, աշխատանքի վերապատրաստում և զբաղվածության այլ ծառայություններ գտնելու նպատակով օգնության համար Ձեզ նույնպես խրախուսվում է օգտվել Զբաղվածության զարգացման վարչության (EDD) հետևյալ ռեսուրսներից.

- [CalJOBSSM](https://www.caljobs.ca.gov/) ([CalJOBS.ca.gov](https://www.caljobs.ca.gov/)) նահանգային առցանց, անվար վիրտուալ զբաղվածության կենտրոն է, որը ներառում է ավելի քա մեկ միլիոն աշխատատեղերի հայտարարություններ աշխատանքի տեղավորման մասնավոր ընկերություններից և կայքերից:
- Աշխատանքի որոնման աջակցությունը, ռեզյումեի պատրաստումը, հարցազրույցի նախապատրաստումը և աշխատանքի վերապատրաստումը մատչելի են [Americas Job Center of California](https://edd.ca.gov/office_locator)-ի (edd.ca.gov/office_locator) նահանգով մեկ գտնվող կենտրոնների միջոցով:
- Մատչելի ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս EDD-ի [Returning to Work](https://edd.ca.gov/return-to-work.htm) (edd.ca.gov/return-to-work.htm) կայքը:

